

**ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒՋՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԵՎ
ՓԼՈՒՋՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ**

1. Իրավիճակի գնահատում

1) Մարզի տարածքում, որպես վտանգավոր հիդրոտեխնիկական կառույց, առկա են Ախպարայի ջրամբարը՝ Հրազդան քաղաքի տարածքում և Սևաբերդի ջրամբարը՝ Սևաբերդ համայնքի տարածքում:

2) Ախպարայի ջրամբարը ստեղծվել է Հրազդան գետի հունի վրա պատնեշման շնորհիվ: Ջրամբարի ընդհանուր ծավալը 5,6, օգտակարը՝ 4.1, մեռյալը՝ 1.18 մլն մ³ է: Ջրի հայելին զբաղեցնում է 1,70 քառ.կմ մակերես:

Պատվարի տեսակը՝ փակ քարալիցքային, ավազակավային անջրանցիկ էկրանով: Նյութը՝ քար, ավազ, կավ: Հիմնական չափերը՝ երկարությունը պատվարի կատարի երկայնքով 117,3 մ, լայնությունը պատվարի կատարի երկայնքով 5,5 մ, առավելագույն բարձրությունը 15մ:

3) Սևաբերդի ջրամբարը ստեղծվել է Գետառ գետի վերին հոսքի վրա պատնեշման շնորհիվ և օգտագործվում է Սևաբերդ, Ակունք, Կաթնաղբյուր, Զառ, Գեղաշեն, Կամարիս, Զովք գյուղական համայնքների դաշտերի ոռոգման նպատակով:

Ջրամբարի պատվարը ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- պատվարը կառուցված է կավահողային միջուկով և հողային շերտով, պատվարի երկարությունը 152մ, առավելագույն բարձրությունը՝ 34 մ,
- ունի երկու կարգավորիչներով 1 ջրթող խորնիստ փական, ջրատարողությունը 1,2 միլ.մ³ է,
- ջրամբարը լրիվ տարողությամբ լցվում է մայիս – հունիս ամիսներին:

4) Ջրամբարի պատվարի փլուզման դեպքում առաջանում է ջրի հզոր հոսքի ներթափանցում վերին բիեֆից դեպի ներքև և առաջացում ճեղքման ալիք, որն էլ հանդիսանում է այս տիպի վթարների հիմնական խոցման գործոնը:

5) Ճեղքման ալիքը իր շարժման ընթացքում զուգահեռ գետի հունով անընդհատ փոխում է իր բարձրությունը, արագությունը, լայնությունը և այլ չափանիշները: Այն ունի ջրերի մակարդակի աճող փուլ և հետագա մակարդակի անկում: Ջրածածկման տարածքները և խորությունը կախված է ճեղքման ալիքի պարամետրերից և տեղագրական պայմաններից: Հետագայում տեղի է ունենում հոսքի վերականգնում:

6) Ջրամբարների պատվարի փլուզումից կամ պատնեշների ճեղքումից կարող է առաջանալ ջրհեղեղներ: Հեղեղման մակերեսը և խորությունը նույնպես կախված է տեղագրական պայմաններից:

2. Եզրակացություն

1) Ախպարայի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում հնարավոր ջրածածկման գոտում կարող են հայտնվել Քաղսի, Բջնի, Արզական, Քարաշամբ, Նուռնուս, ՆորՀաճն, Արզնի, Գետամեջ, իսկ

Սևաբերդի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում՝ Ակունք, Կաթնաղբյուր, Զառ համայնքների որոշ գյուղատնտեսական հողատարածքները, ավամերձ տարածքներում գտնվող շենք-շինությունները, կամուրջները, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիները:

2) Կարող է առաջանալ բնակչության և վտանգավոր տարածքներից նյութական արժեքների մասնակի դուրս բերման անհրաժեշտություն:

3) Տարահանված բնակչությանը կոմունալ-կենցաղային ապահովման անհրաժեշտությունը նվազագույն է, քանի որ նրանց նախատեսվում է տեղավորվել նույն համայնքների անվտանգ տարածքի տներում:

4) Պատվարի փլուզման դեպքում հնարավոր ջրածածկման գոտում կարող են հայտնվել համայնքների մոտ 1520 մարդ, որոշ գյուղատնտեսական հողատարածքներ, ավամերձ տարածքներում գտնվող շենք-շինություններ, կամուրջներ, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիներ:

5) Հնարավոր ջրածածկման գոտում գտնվող համայնքների բնակչությանն ազդարարելու նպատակով տեղադրված վաղ ազդարարման համակարգը ունի ցածր հուսալիություն և չի կարող ծառայել իր նպատակին:

6) Ստեղծված են ինչպես մարզային, այնպես էլ համայնքային բնակչության պաշտպանության ծառայություններ, որոնց բազայի հիման վրա կարելի է իրականացնել բնակչության պաշտպանության միջոցառումների համակողմանի ապահովման գործընթացը: Ծառայությունների համալրվածությունը անձնակազմով բավարար է, սակայն բնակչության պաշտպանության լայնածավալ միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ սննդամթերային, իրային, ՎՔՆ և այլ նյութատեխնիկական միջոցների ապահովման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՓԱՎԱ ներգրավված սարքավորումների ու տեխնիկայի վերանորոգման և վերականգնման բազան բացակայում է:

7) Մարզի բնակչության պաշտպանության համակարգի ղեկավար կազմը որոշ սահմանակազմումներով ի վիճակի է իրականացնելու իր վրա դրված խնդիրները:

3. Ազդարարում

1) Ջրամբարների պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում հնարավոր հեղեղումները և ջրհեղեղները կանխելու նպատակով անհրաժեշտ է անընդմեջ հետևել եղանակին, ջրամբարի, սնվող գետի վիճակին՝ բնակչությանը նախօրոք ազդարարելու համար: Անմիջական վտանգի դեպքում տրվում է «Աղետալի ջրածածկում» ազդանշան՝ բնակչությանը նախազգուշացնելու համար:

3) Ախպարայի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում հնարավոր ջրածածկման գոտում գտնվող թվով 8 համայնքների բնակչությանն ազդարարելու նպատակով համայնքներում տեղադրվել է վաղ ազդարարման համակարգ: Համակարգում ընդգրկված են 16 էլեկտրաշչակներ, որից 2 ական Քաղսիում, Բջնիում, Արզականում, Քարաշամբում, ՆորՀաճնում, Գետամեջում: Նուռնուսում 1, Արզնիում 3, իսկ Սևաբերդի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտում գտնվող թվով 3 համայնքների բնակչությանն ազդարարումը իրականացվելու է պարզագույն մեթոդներով:

5) Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպվում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակների հանձնաժողովի, համայնքների ղեկավարների և տարահանման հանձնաժողովի անդամների ազդարարումը:

6) ՀՀ Կոտայքի մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացնում է Կոտայքի մարզային փրկարարական վարչության ղիսպետչերական կետի հերթապահը: Օպերատիվ հերթապահը, ազդանշան ստանալուն պես, ստեղծված իրավիճակից ելնելով, կատարվածի մասին զեկուցում է ՀՀ Կոտայքի մարզպետին և Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին: Ստանալով մարզպետից համապատասխան կարգադրություն՝ իրականացնում է ղեկավար կազմի և համայնքապետերի ազդարարումը: Անհրաժեշտության դեպքում ղիսպետչերական կետի հերթապահը տալիս է հրահանգ համայնքների ղեկավարներին իրականացնել բնակչության ազդարարում էլեկտրաշչակների միացումով կամ այլ պարզագույն մեթոդներով:

7) Ազդարարման ավարտի մասին օպերատիվ հերթապահը զեկուցում է Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին, իսկ նա իր հերթին՝ մարզպետին:

8) Լսելով շչակների ձայնը, անհրաժեշտ է անմիջապես միացնել հեռուստացույցը, ռադիոընդունիչը և լսել տեղական կառավարման մարմինների կամ մարզային փրկարարական ծառա

յության հաղորդումներն ու հայտարարությունները: Վթարի վերացման ամբողջ ժամանակաշրջանում բոլոր այդ միջոցները անհրաժեշտ պահել միացված վիճակում: Տեղական ռադիոհեռուստատեսության հաղորդակցական կայանները անցնում են շուրջօրյա աշխատանքային ռեժիմի:

- 9) Մինչև ջրհեղեղը «Աղետալի ջրածածկում» ազդանշանով բնակչության գործելու կարգը՝
- ա. միշտ պատրաստ ունենալ աղետի կապոց,
 - բ. պատրաստել ավագով լցված պարկեր,
 - գ. մաքրել կոյուղին,
 - դ. պահեստավորել խմելու ջրի և սննդի պաշար՝ մի քանի օրվա համար,
 - ե. հետևել ջրաօդերևութաբանական ազդարարման նշաններին,
 - զ. նախատեսել փրկարարական միջոցների պահուստներ (փրկարարական օղակ, փրկաբաճկոն և այլն),
 - է. անհրաժեշտության դեպքում կահույքը բարձրացրել ջրի սպասվելիք մակարդակից բարձր,
 - ը. թունավոր և վտանգավոր նյութերը տեղափոխել ավելի ապահով տեղ,
 - թ. ջրհեղեղի սպառնալիքի դեպքում անջատել գազը, էլեկտրականությունը,
 - ժ. իմանալ բնակավայրի ռելիեֆը և ջրհեղեղի սպառնալիքի դեպքում այնտեղից անվտանգ հեռանալու ճանապարհները,
 - ժա. եթե չէք հասցրել բնակավայրից հեռանալ, ապա տրանսպորտով կամ ոտքով բարձրանալ բնակավայրին մոտ գտնվող բարձրադիր վայրերը (բլուր, լեռ և այլն),
 - ժբ. պատրաստի ունենալ լուսային ազդանշանային սարքեր,
 - ժգ. ամրացնել այն ամենը, ինչ կարող է լողալ ջրի մեջ (կահույք և այլն),
- 10) ջրհեղեղի ժամանակ «Աղետալի ջրածածկում» ազդանշանով բնակչության գործելու կարգը՝

- ա. մինչև կառավարման մարմինների համապատասխան ցուցումները մնալ ապաստարաններում,
- բ. աղետի կապոցը թրջվելուց զերծ պահել,
- գ. տանը ոչ մի դեպքում չօգտվել կենցաղսպասարկման համակարգերից՝ երկրորդաձին աղետներից խուսափելու համար,
- դ. չփորձել կտրել-անցնել ջրային հոսքը. 15 սմ խորության ջրի արագ հոսքը վտանգավոր է մարդու համար, իսկ 50 սմ-ը՝ անանցանելի սովորական մեքենաների համար,
- ե. ծանձաղ տեղերն անցնելիս հագնել ջրակայուն պինդ կոշիկներ և օգտվել ձեռնափայտից,
- զ. օգնության կարիքի դեպքում տալ աղետի ազդանշան (խարույկ, բղավոց, կրակոց, դրոշներ, ազդանշան և այլն).

- 11) Ջրհեղեղից հետո բնակչության գործելու կարգը՝
- ա. ուշադիր հետախուզել կացարանի հիմքի ամբողջությունը, պատերի, պատուհանների և հատակի վիճակը, հաղորդակցության համակարգը, թունավոր օձերի հնարավոր առկայությունը,
 - բ. ստուգել սննդի պիտանելիությունը, դրանք լվանալ եռացրած ջրով,
 - գ. խմելու ջուրն օգտագործել սանիտարական ստուգումից կամ եռացնելուց հետո,
 - դ. չօգտագործել ջրում հայտնված սննդամթերքը,
 - ե. նախքան հաղորդակցության համակարգերից օգտվելը՝ ստուգել դրանց վնասվածության աստիճանը,
 - զ. հաղորդակցության համակարգերի վերանորոգումը վստահել մասնագետներին,
 - է. վտանգավոր է մնալ այն տանը, որը վթարային է կամ վստահություն չի ներշնչում :

4. Հետախուզության կազմակերպում

Ջրամբարի փլուզման վթարը վերացնելու, ջրածածկման հատվածում ստեղծված փաստացի իրավիճակը պարզաբանելու, ճանապարհների, բնակավայրերի, կոմունալ-կենցաղային, մարդկանց փրկարարական և առաջին բուժ. օգնության աշխատանքների ծավալները պարզաբանելու և կենսաապահովումը կազմակերպելու նպատակով կազմակերպվում է հետախուզություն.

1) հետախուզության անմիջական կազմակերպիչներ են մարզպետը և Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետը.

2) հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում են ԱԻՀ-ը և Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը.

3) հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն իրականացնում են պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարները.

4) աղետի տարածքում հետախուզությունը ղեկավարվում է հիմնական և պահեստային կետերից: Առանձին դեպքերում փրկարարական աշխատանքների տեղամասերում աշխատանքների կառավարումը կարող է իրականացվել շարժական կառավարման կետերից, որոնք հազեցվում են կապի տեխնիկական և սուրհանդակային ուժերով ու միջոցներով.

5) հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի.

6) իրադրության վերաբերյալ ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են համապատասխան ղեկավարներին .

7) հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն.

8) հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում՝ զեկուցվում են անմիջապես.

9) ազդանշան ստանալու դեպքում հետախուզության բոլոր խմբերի օղակները երթուղի դուրս գալու համար պետք է լինեն 1 ժամյա պատրաստվածության վիճակում

10) համայնքային մակարդակում ներգրավվում են՝

ա. պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության փորձագիտական կենտրոնների լաբորատորիաները,

բ. «Հանրապետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածաշրջանային ստորաբաժանումները,

գ. հիդրոոդերևութաբանական կայաններ.

11) հետախուզության օղակի կազմը համալրվում են՝ 2 ջրփրկարարներով, 2 բուժաշխատողներով, 1 կապավորով: Անհրաժեշտության դեպքում, կախված իրադրությունից, օղակը համալրվում է համապատասխան մասնագետներով: Յուրաքանչյուր խմբերին տրամադրվում են բարձր անցանելիության տրանսպորտային միջոց.

12) հետախուզության կազմակերպման ընթացքում մարզի ԱԻ գործող հանձնաժողովի նախագահը՝

ա. գլխավորում է վթարի հետևանքների մասին տեղեկությունների հավաքման ու մշակման կետի շուրջօրյա աշխատանքը,

բ. ստացված հետախուզական տեղեկատվությունների հիման վրա ճշգրտում մարզի վարչությունների, ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների գործողությունները, ինչպես նաև մարզում գործող ստորաբաժանումների հանձնարարությունները,

գ. հաշվարկում անհրաժեշտ ուժերի և միջոցների քանակը ջրածածկված վայրերի հետախուզման կազմակերպման համար,

դ. իրականացնում է վթարի գոտու հետախուզության կազմակերպումը,

ե. մարզային փրկարարական վարչության պետի հետ միասին կազմակերպում ու կոորդինացնում ստեղծված հետախուզական կազմավորումների աշխատանքը վթարի տարածքում:

13) հետախուզության խմբերը՝

ա. մանրակրկիտ ուսումնասիրում են շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանը,

բ. որոշում և նշում են ջրածածկված գոտու սահմանները,

գ. հայտնաբերում ջրի տարածման ուղղությունները,

դ. ճշտում անվտանգ տեղամասերը և ուսումնասիրում դեպի անվտանգ գոտի տանող ճանապարհների վիճակը,

ե. հայտնաբերում տուժածներին և ցուցաբերել առաջին բուժօգնություն,

է. որոշում են բնակչության փրկության և տարահաման ձևերն ու կարգը,

ը. որոշում են հետագա իրավիճակի հետևանքների զարգացումը և անմիջապես տեղեկացնում մարզի ԱԲԳՀ-ին.

14) հետախուզության ընթացքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը՝

ա. մասնակցում է ջրածածկված տարածքի իրավիճակի հետախուզությանը, տուժածների բացահայտմանը՝ առաջին բուժ. օգնության ցուցաբերման նպատակով,

բ. իրականացնում է բակային համայցեր՝ տուժածների հայտնաբերման նպատակով.

15) ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունը՝

ա. աջակցում և ապահովում է հետախուզական խմբերի կայուն գործունեությանը,

բ. օժանդակում է մարզի ԱԲԳՀ-ի աշխատանքներին, ապահովում կազմավորումների մեքենաների ազատ մուտքը դեպի վնասված բնակավայրեր,

գ. տուժածների հայտնաբերման նպատակով մասնակցում է բակային համայցերին.

16) «ԱրմենՏել» ՓԲԸ Կոտայքի տարածքային կենտրոնը (մարզային կապի և ազդարարման ծառայությունը) հետախուզական խմբերի հետ ապահովում է մշտական կապը ջրածածկված բնակավայրերում և թաղամասերում:

17) ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը՝

ա. հետախուզության խմբերին ապահովում է անհրաժեշտ տրանսպորտային միջոցներով,

բ. տարահանվող բնակչության ընդունման նպատակով ուսումնասիրում և նախապատրաստում տարածքներ

18) Մարզի հիդրոոգեոլոգիական ծառայությունը՝

ա. պարզում է քամու արագությունը, ուղղությունը, օդի ջերմաստիճանը և եղանակի տեսությունը,

բ. հնարավոր սպասելիք փոփոխությունների դեպքում անմիջապես տեղեկացնում էլ մարզի ԱԲԳՀ-ի ն.

19) տարածաշրջանի համայնքների և հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները կազմակերպում են աջակցություն և օգնություն հետախուզական խմբերի աշխատանքներին.

20) կոմունալ տեխնիկական ծառայությունը իրականացնում է հետախուզություն կոմունալ ցանցերի վարակվածության պարզաբանման ուղղությամբ:

5. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում (իրականացում)

Հավաքելով և վերլուծելով ջրածածկման գոտու հետախուզական տվյալները, մարզի ԱԲՀ-ն միջոցները ջրամբարի պատվարի փլուզումից առաջացած ջրհեղեղից տուժած համայնքներում փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով ,պարզաբանում է ջրածածկման մասշտաբները, փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը, մարզի փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ուժերի կազմը, վիճակը, փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով կազմավորումների, գորամասերի և ստորաբաժանումների ներգրավման անհրաժեշտությունը, օգնության կարգով ներգրավվող ուժերի և միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները, աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունը:

1) Մարզի ԱԲ հանձնաժողովի նախագահը՝

ա. ջրածածկումից տուժած բնակավայրերում, տեղամասերում կազմակերպում է որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներ.

բ. Կոտայքի մարզային փրկարարական վարչության ուժերի և միջոցների բազայի վրա ստեղծում է ուժերի և միջոցների խմբավորումներ՝ ընդգրկելով մարզի ուժերի և միջոցների

խմբավորումները, հասարակական փրկարարական խմբերը,

գ. փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների ստեղծման ժամանակ պահպանում է նրանց կենտրոնացման սկզբունքները՝ հաշվի առնելով բնակավայրերի վնասվածության աստիճանը և նրանցում բնակչության քանակը.

դ. ուժերի տեղակայման վայրում հաշվի առնելով՝ հիգենիկ-համաճարակային իրավիճակը, գերակշռող քամիների ուղղությունը, ճանապարհների առկայությունը, ջրածածկման գոտիներում ՓԱՎԱ իրականացնելիս ուժերի և միջոցների կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումը առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ.

ե. փրկարարական աշխատանքների կազմակերպման և ուժերի կառավարման հարմարության նպատակով ջրածածկման գոտին բաժանում է փրկարարական աշխատանքների տեղամասերի և նշանակում ղեկավարներ.

զ. կոորդինացնում և պլանավորում է բնակչության պաշտպանության միջոցառումների ապահովումը ՓԱՎԱ-ի ընթացքում:

2) Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետը՝

ա. ղեկավարում է աղետի գոտում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները, ծավալում փրկարարական աշխատանքների տեղամասերի, ղեկավարների շարժական կառավարման կետերը և կազմակերպում է կապը նրանց միջև.

բ. կազմակերպում, ղեկավարում և կոորդինացնում է փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների գործունեությունը.

գ. կազմակերպում է աշխատանքային տեղամասերում գործող ուժերի համագործակցությունը.

դ. ապահովում է համագործակցություն փրկարարական տեղամասերի միջև, հնարավորության դեպքում իրականացնում է ուժերի և միջոցների տեղաշարժ մեկ այլ առավել ծանր տեղամաս.

ե. վարչության անձնակազմից նշանակում պատասխանատուներ համայնքներում փրկարարական աշխատանքները համակարգելու նպատակով.

զ. հաշվարկում է անհրաժեշտ լրացուցիչ ուժերի և միջոցների քանակը՝ տուժած տարածքներում գտնվող համայնքներում փրկարարական աշխատանքներ կատարելու համար և պատրաստում է համապատասխան առաջարկություններ.

է. հրշեջ ուժերը կենտրոնացնում է առաջացած հրդեհները մեկուսացնելու և մարելու նպատակով.

ը. հրշեջ մեքենաները և հատուկ սարքավորումները պատրաստ վիճակի է բերվում անհրաժեշտության դեպքում ջուրը արտամղելու համար:

3) Փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարնը՝

- որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

- որոշում են ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

- համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ենթակա ուժերի և հարևան կազմավորումների գործողությունները.

- որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

- միջոցներ են ձեռնարկում մարդկանց փրկելու, առաջին օգնություն ցուցաբերելու և ստացիոնար բուժ. հիմնարկներ տեղափոխելու վերաբերյալ.

- տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում օգտագործում են տեղի բնակչության կողմից ստացված տեղեկատվությունը:

4) Կապի և ազդարարման ծառայությունը իրականացնում և ապահովում է կապը տուժած համայնքների հետ, այնտեղ տեղաբաշխելով ռադիոկապի միջոցներ, անհրաժեշտության դեպքում ներգրավելով ՊՆ կապի միջոցները համաձայն համագործակցության պլանի:

5) Հասարակական կարգի պահպանության ծառայությունը՝

ա. ապահովում է տուժած համայնքներում հասարակական կարգի պահպանումը.

բ. խիստ հսկողություն է սահմանում վնասված շենքերից ու շինություններից տարահանված բնակչության բնակարաններին և գույքին.

գ. ապահովում է ինժեներական տեխնիկայի անարգել մուտքը ջրհեղեղից տուժած բնակավայրեր, տեղամասեր.

դ. կանխում դիակապտության, կողոպուտի ու թալանի դեպքերը.

ե. բացառում կարևոր ճանապարհների և երթուղիների խցանումները և այլ խոչընդոտումներ:

զ. վտանգավոր գոտում կազմակերպում է շուրջօրյա և ուժեղացված հերթապահություն.

զ. արգելում է մարդկանց մասսայական կուտակումներ, միջոցառումներ տուժած գոտում:

6) Բժշկական ծառայությունը՝

ա. ապահովում է բնակավայրերի տարածքներում գտնվող տուժած բնակչության առաջին բուժօգնությունը և վիրավորների տեղափոխումը հիվանդանոցներ և այլ բուժհաստատություններ.

բ. սահմանում է հսկողություն սանիտարական իրադրությանը, կազմակերպում է հակահամաճարակային միջոցառումների կատարումը:

գ. ապահովում է տուժած մարդկանց անհապաղ տեղափոխումը հիվանդանոցներ կամ այլ բուժհաստատություններ

7) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայությունը՝

ա. ստացված հետախուզական տեղեկատվությունների հիման վրա ճշգրտում է գյուղատնտեսության ոլորտին վերաբերվող ծառայությունների, ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների գործողությունները.

բ. գնահատում ջրածածկման հետևանքով տարբեր տեսակի կենդանիների տեղաշարժի հետ կապված ռիսկը, ճշտում ընտանի կենդանիների գլխաքանակը և անցկացում հաշվառում.

գ. կազմակերպում է աղետի գոտում վիրավոր և հիվանդ կենդանիների բուժօգնությունը և ընդհանուր անասնագլխաքանակի տարահանումը հարևան անվնաս տարածքներ.

դ. համայնքներում համապատասխան ծառայությունների հետ կահավորում է անասնագերեզմանոցները և անկված կենդանիների դիակները ախտահանելուց հետո խորը թաղում.

ե. գնահատում է գյուղատնտեսական հողատեսքերի հետ կապված փոփոխությունները, հասցված վնասի չափը և մասշտաբները:

8) Ինժեներական ծառայությունը՝

ա. մարզի չտուժած տարածքներից ինժեներական տեխնիկան ուղարկում է ջրածածկման տարածքում գտնվող համայնքներ՝ ՓԱՎԱ կատարման համար.

բ. տարածաշրջանի համայնքներում առկա ինժեներական տեխնիկան ուղարկվում է ջրամբարի պատվարի փլուզման հետևանքով փակված ճանապարհահատվածը մաքրելու և համայնքների մոտ փակված գետի հուները բացելու համար:

9) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայությունը՝

ա. վերացնում է էներգամատակարարման համակարգում առաջացած վթարները և սեղմ ժամկետներում վերականգնում էներգամատակարարումը.

բ. ժամանակավոր կացարանները և փրկարարական աշխատանքների տեղամասերը գիշերային ժամերին ապահովում է լուսավորությամբ շարժական էլեկտրակայանների՝ դիզել գեներատորի միջոցով:

10) Գազասպասարկման ծառայությունը վերացնում է գազատարներում առաջացած վթարները և սեղմ ժամկետներում վերականգնում կարևորագույն նշանակության օբյեկտների գազատակարարումը:

11) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական ծառայությունը՝

ա. կազմակերպում և ղեկավարում է ՓԱՎԱ-ի նյութատեխնիկական միջոցների և սննդամթերքի ապահովումը.

բ. ստեղծում է նյութատեխնիկական ապահովման աշխատանքային խումբ, որի միջոցով ձևակերպում, հաշվառում, գրանցում և հսկում է նյութատեխնիկական միջոցների տեղափոխման աշխատանքները.

գ. կազմում է տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսաապահովման համար անհրաժեշտ սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների հայտ, նրանց ժամանակին տեղափոխման և բաշխման ցուցակներ, նախապատրաստում համապատասխան բացթողման հայտագրեր.

դ. իրականացնում է նրանց պահեստավորումը և տեղափոխումը.

ե. ճշտում է պետական, հասարակական փրկարարական ուժերի անձնակազմի թիվը և վերահաշվարկում նրանց համար պահանջվող նյութատեխնիկական միջոցների թվաքանակն ու իրականացնում կենսաապահովումը:

12) Կոմունալ տեխնիկական ծառայությունը՝

ա. արագ վերացնում է վթարները կոմունալ ցանցերում և կատարում խմելու ջրի մատակարարումը անհրաժեշտ ուղղություններում՝ ապահովելով ջրի սանիտարական վիճակը.

բ. իրականացնում է ջրամբարների և ջրատարների մաքրման և պխտահանման աշխատանքները.

գ. անհրաժեշտության դեպքում բնակչությանը ջրատար մեքենաներով մատակարարում է մաքուր ջրով:

13) Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնը՝

- զանգվածային լրատվության միջոցներով կազմակերպում է բնակչության համար օբյեկտիվ ու սպառիչ տեղեկատվություն, մարդկանց տարահանումն անկորուստ կազմակերպելու, նրանց գործողություններն ինքնակառավարելու և զանգվածային խուճապից զերծ պահելու նպատակով.

- մշակում է աղետի գոտուց լրատվությունն հաղորդելու պլան.

- անմիջապես ընդգրկում է ստեղծված օպերատիվ խմբի մեջ պրոֆեսիոնալ պատշաճ մակարդակով անձնակազմ և կազմակերպում նրանց մեկնումը աղետի գոտի,

- մշտապես համագործակցում է մարզային իշխանությունների և այլ գործակալության լրատվական ծառայությունների հետ, կապ պահպանում ԱԻԳՀ-ի հետ, նրան զեկուցում իրականացվող աշխատանքների մասին:

Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում կանխարգելման կամ նվազեցման միջոցառումների պլանը

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Պատասխանատու	Ժամկետը
1	2	3	4
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը:	Ջրամբարի սեփականատեր Հնարավոր ջրածածկման գոտում հայտնված համայնքների ղեկավարներ	Մինչ գարնանային վարարումները
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ ջրամբարի, գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հունները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարի մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայության պետ	Ամեն օր
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպոր-	Կոտայքի	Մինչ

1	2	3	4
	տային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ	գարնանային վարարումները
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	
9.	Ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցությունների պլանները:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ	
10.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մշտապես
11.	Մահմանել հսկողություն Ախպարայի ջրամբարի փլուզման դեպքում 8 ջրածածկվող համայնքների և Սևաբերդի ջրամբարի փլուզման դեպքում 3 ջրածածկվող համայնքների վաղ ազդարարման համակարգերի վրա՝ անսարքությունները բացառելու նպատակով:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մշտապես
12.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքների ղեկավարներ	Ըստ անհրաժեշտության

**ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒՉՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՂԵՂՄԱՆ ԳՈՏԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ**

ՀՀ	Բնակավայրերի անվանումը	Բնակչության թիվը	Հեղեղման ժամանակը	Ջրածածկման գոտու բնակչության թիվը
ԱԽՊԱՐԱՅԻ ՋՐԱՄԲԱՐ				
1	Քաղսի	2528	5 րոպե	160
2	Բջնի	3005	16 րոպե	100
3	Արզական	2940	31 րոպե	200
4	Քարաշամբ	738	41 րոպե	50
5	Նուռնուս	560	52 րոպե	
6	Նոր Հաճն	10895	60 րոպե	
7	Արզնի	2450	62 րոպե	60
8	Գետամեջ	885	69 րոպե	250
ԸՆԴԱՄԵՆԸ		24001		820
ՍԵՎԱԲԵՐԴԻ ՋՐԱՄԲԱՐ				
1	Ակունք	2128	16 րոպե	320
2	Կաթնաղբյուր	713	22 րոպե	80
3	Զառ	1450	9 րոպե	300
ԸՆԴԱՄԵՆԸ		4291		700

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ՎՏԱՆԳԻ ԴԵՊՔՈՒՄ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ	Միջոցառումների անվանումը	Կատարման ժամկետը	կատարողներ
1.	Վտանգի մասին ՄՓՎ դիսպետչերական կետ տեղեկացում	5 րոպե	ջրամբարի հերթապահ
2.	Ղեկավար կազմի ազդարարում	6 րոպե	ՄՓՎ դիսպետչերական կետի հերթապահ
3.	Կառավարման մարմինների պատրաստության բերում , շուրջօրյա աշխատանքի կազմակերպում	1 ժամ	Բոլոր մակարդակի պետեր
4.	Ջրամբարի վիճակի ստուգումների անցկացում և նրանց բարելավում	անմիջապես	Հետախուզական խումբ ջրամբարի ղեկավարություն
5.	Իրավիճակի բացահայտում և գնահատում	20 րոպե	Հետախուզական խումբ և ինժեներական ծառայություն
6.	կազմավորումների պատրաստության բերում	1 ժամ 30ր.	Համայնքների ղեկավարներ
7.	Բնակչության ազդարարումը	Անհրաժեշտության ն դեպքում	Տեղական ինքնակառավարման մարմիններ
8.	Տարահանման կազմակերպումը և բնակչության կենսապահովում	Անհրաժեշտության ն դեպքում	Տարահանման հանձնաժողովներ
9.	Օպերատիվ խմբերի մեկնումը աղետի գոտի	3 ժամ	Համապատասխան գերատեսչությունների ՕԽ
10.	Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում	Ըստ իրադրության	ՄՓՎ, համայնքների ղեկավարներ
11.	Հասցված վնասների չափերի գնահատում	Ըստ իրադրության	ՄՓՎ, համայնքների ԱԻ հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման հանձնաժողովներ

8. Փոխգործողություններ

- 1) Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ վայրի և ժամանակի, փոխգործողությունների հիմքն են հանդիսանում համապատասխան պլանները:
- 2) Փոխգործողություններ կազմակերպելիս համաձայնեցվում է՝
 - ա) տարածք (օբյեկտ) մուտք գործելու ժամանակ գործողությունների կարգը,
 - բ) փրկարարական աշխատանքների իրականացմանը խանգարող հանգամանքների, խոչընդոտների վերացման կարգը,
 - գ) տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև,
 - դ) իրադրության բարդ պայմաններում փրկարարների գործելու կարգը,
 - ե) կոմունալ-էներգետիկ համակարգի վթարների վերացման ժամանակ փրկարարների և տեղական կազմավորումների մասնագետների հետ փոխգործողության կարգը,
 - զ) հերթափոխման ժամանակ գործողությունների կարգը,
 - է) իրավիճակի կտրուկ փոփոխության, փրկարարի կյանքին անմիջական վտանգի դեպքում գործողության կարգը,
 - ը) կապի և տեղեկատվության կարգը,
 - թ) կառավարման կետերի տեղակայման վայրերը:
- 3) Ելնելով ստեղծված իրավիճակից առավել վնասված կազմակերպություններում փոխգործողության կարգով կարող են միմյանց տրամադրել փրկարարական և այլ կազմավորումներ՝ ուժեր ու միջոցներ:
- 4) Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում փոխգործողության կարգով կարող են ընդգրկվել նաև մարզի ու հարակից տարածքի հասարակական փրկարարական ջոկատների և կամավորական միությունների անձնակազմերը: Առկա ուժերի ու միջոցների անբավարարության դեպքում մարզպետի հայտով ՓԾ տնօրենի որոշմամբ փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում կարող են ընդգրկվել նաև ՓԾ փրկարարական ստորաբաժանումները:
- 5) Անհրաժեշտության դեպքում մարզում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների փոխգործողությունները իրականացվում են նաև հարևան մարզերի համապատասխան ծառայությունների ուժերի հետ: Հարևան մարզերի կողմից ուժեր և միջոցներ կարող են հատկացվել մարզպետի հայտերի հիման վրա: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են նախապես մշակված և ՀՀ ԱԻՆ ՓԾ կողմից հաստատված պլանների հիման վրա:
- 6) Ծագող լրացուցիչ հարցերը լուծվում են՝ համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ և ՀՀ ՊՆ, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության միջև ըստ փոխգործողությունների պլանների:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՄՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Փ/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ